

“ 07 “ 04 “ 2016թ.

ՔՔ 16156

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց

Էթիկայի հանձնաժողովի նախագահ

Սիրանուշ Սահակյանին

բ. Երևան, Բաղրամյան - 26

Հարգելի տիկին Սահակյան,

«hetq.am» Էլեկտրոնային լրատվամիջոցը ս.թ. ապրիլի 4-ի համարում հրապարակել է «Պանաման նվաճած հայ գեներալը. Միհրան Պողոսյանի օֆշորային ընկերությունները և հաշիվները շվեյցարական բանկերում» վերտառությամբ հոդվածը¹, որն անդրադառնում է ՀՀ գլխավոր հարկադիր կատարող, արդարադատության գեներալ-մայոր Միհրան Պողոսյանի՝ օֆշորային գոտիներում գրանցած ընկերությունների միջոցով բիզնես վարելուն, իր պաշտոնը սեփական բիզնեսի զարգացման համար օգտագործելուն և եկամուտները թաքցնելուն:

Ըստ վերոնշյալ հրապարակման՝ «Ջետքը» մասնակցել է Ջետաքննող լրագրողների միջազգային կոնսորցիումի համատեղ (ICIJ) նախագծին, որի շրջանակում գաղտնագերծվել է 200-ից ավելի երկրների և տարածքների առնչվող շուրջ 11,5 մլն փաստաթուղթ: Համաձայն գաղտնագերծված փաստաթղթերի՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը բաժնետեր է Պանամայում գրանցված երեք ընկերությունների՝ «Սիգթեմ ռեալ էսթեյթ ինքորփորեյթիդ» (Sigtem Real Estates Incorporated), «Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ» (Hopkinten Trading Incorporated) և «Բանջիո ինվեստ» ԲԸ (BANGIO INVEST S.A.): Ընդ որում, Միհրան Պողոսյանն առաջին երկու ընկերությունների բաժնեմասը ստանձնել է 2011թ. մարտին, այսինքն՝ այն ժամանակ, երբ արդեն զբաղեցնում էր ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնը:

Մ. Պողոսյանի՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացրած գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրերում որևէ գրառում առկա չէ վերոնշյալ ընկերություններում նրա ունեցած բաժնեմասերի վերաբերյալ, իսկ նրա հայտարարագրած դրամական միջոցները «շատ համեստ են, նա ունեցել է ընդամենը 22 մլն 359 հազար դրամի եկամուտ, որից աշխատավարձը՝ մոտ 12,5 մլն, իսկ մնացածը՝ վարձակալության դիմաց ստացված վճարներ»:

¹ <http://hetq.am/arm/news/66918/panaman-nvatchats-hay-general%2%80%A4-mihran-poxosyani-ofshorayin-yunkerutyunnery-ev-hashivnery-shveycarakan-bankerum.html>

Սակայն տարբեր գանգվածային լրատվամիջոցներով բազմիցս բարձրացվել է Մ.Պողոսյանի բիզնես-գործունեության և հայտարարագրված ու իրական գույքի միջև ակնհայտ անհամապատասխանության մասին, ինչը երբևէ քննության առարկա չի դարձել պետական իրավասու մարմինների, տվյալ դեպքում բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 43-րդ հոդվածի՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործառույթներից է հայտարարագրերի վերլուծությունը և հրապարակումը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման բացահայտումը: Նույն օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն էթիկայի հանձնաժողովը վարույթ հարուցում է սեփական նախաձեռնությամբ:

«hetq.am»-ի հրապարակման հիման վրա էթիկայի հանձնաժողովն օրենքով իրեն տրված լիազորությունների շրջանակում գործողություններ չի ձեռնարկել և իր նախաձեռնությամբ վարույթ չի հարուցել՝ հրապարակման մեջ եղած փաստերն ուսումնասիրելու և օֆշորային բիզնեսում ներգրավված պաշտոնյայից բացատրություններ պահանջելու համար: Ավելին, հանձնաժողովը նման վարքագիծը պատճառաբանել է համապատասխան դիմումի բացակայությամբ¹: Չկիսելով իրավական կարգավորումների վերաբերյալ այդ տեսակետը, այդուհանդերձ, ելնելով վերոգրյալ փաստերից և դիմելով Ձեզ՝ խնդրում ենք՝

1. Սույն դիմումն ընդունել որպես վարույթի հարուցման հիմք
2. Ուսումնասիրել հրապարակման մեջ առկա փաստերը և դրանց համապատասխանությունը գույքի և եկամուտների հայտարարագրերին
3. Պարզել առկա է արդյո՞ք շահերի բախում կամ նման ռիսկ Մ. Պողոսյանի կողմից պաշտոնավարման և միաժամանակ ձեռնարկատիրությամբ զբաղվելու դեպքում.
4. Պարզել ներդրումները կառավարելիս Մ. Պողոսյանի կողմից չեն օգտագործվել արդյո՞ք պաշտոնական դիրքը և լիազորությունները:

Գույքի և եկամուտների աղբյուրների օրինականության վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում, հուսով ենք, օրենքով սահմանված կարգով կդիմեք իրավապահ մարմիններին:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն



Վարուժան Հոկտանյան

¹ <http://hetq.am/arm/news/67106/dahk-tsarayutyan-peti-dem-varuyt-chi-harucvel-spasum-en-dimumi.html>

